ԿԱՐԾԻՔ

Սյուզաննա Սոսի Բարսեղյանի՝ «Էթնիկ մամուլի դերը հայկական սփյուռքում (էթնոսոցիոլոգիական հետազոտություն)» Է.00.04 «Ազգագրություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Արդի գլոբալիզացիոն գործընթացներն էական ազդեցություններ են ունենում իրենց մայր միջավայրից կտրված, այլէթնիկ միջավայրում բնակվող, էթնիկ ընդհանրությունների ինքնության պահպանման վրա, հատկապես ուծացման առումով: Այդ գործընթացներից զերծ չէ նաև հայկական սփյուռքը, որի գոյատևումը ողջ հայ ժողովրդի համար ազգապահպանման առանցքային խնդիր է: Սփյուռքի և ՀՀ սոցիալական կառույցները տարաբնույթ աշխատանքներ են իրականացնում հայոց սփյուռքի գոյատևումն ապահովելու նպատակով: Այնուամենայնիվ, համաշխարհային միջէթնիկ հաղորդակցության հաճախականության ինտենսիվության աճը, շփման ծավալների ընդլայնումը, սփյուռքում քաղաքական, սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական և այլ կարգի սոցիալական գործոններն իրենց առանձնահատուկ ազդեցություններն են ունենում հայկական սփյուռքի տարբեր հատվածների վրա: Ուստի հայ ժողովրդի համար (և՛ ՀՀ-ի, և՛ սփյուռքի) կարևորագույն խնդիրներից է գտնել այն ուղիները, որոնց միջոցով հնարավոր կլինի նպաստել հայկական սփյուռքի բարգավաճմանը: Սույն աշխատանքը նվիրված է հայկական սփյուռքի գոյատևումն ապահովող կարևորագույն միջոցներից մեկի՝ սփյուռքում հրատարակվող էթնիկ մամուլի գործառույթներին: Արդի պայմաններում տեղեկատվությունը փոխանցող միջոցները էական դերակատարություն ունեն սփյուռքի ապրելակերպում: Հայկական սփյուռքը տարբեր երկրներում ունի ծագումնաբանական, միգրացիոն, սոցիալական առանձնահատկություններ, որոնց տեղեկատվական միջոցների և այլ կարգի ուսումնասիրությունները պահանջում են մանրամասն բացահայտել դրանց հնարավորությունների առանձնահատկությունները էթնիկ ինքնության պահպանման գործում: Այդ իսկ առումով, ատենախոսության թեմայի ընտրությունը արդիական է և՛ գիտական, և՛ գործնական առումներով:

Առաջին գլխում ներկայացվել է էթնիկ մեդիայի հայեցակարգը: Հեղինակը վերլուծել է տեսական բազմաթիվ մոտեցումներ, որը հնարավորություն է ընձեռել որոշելու հետազոտության խնդիրները, ընտրելու անհրաժեշտ մեթոդներն ու գործիքակազմը: Արժեքավոր է այն հանգամանքը, որ վերլուծվել են էթնիկ մեդիայի գործառույթների տեսական բացատրությունները, որը հետազոտության գործնական ելքերը փնտրելու առանցքային ուղիներից է: Այստեղ բերվել են նաև աշխարհի բազմաթիվ երկրներում էթնիկ մեդիայի տարածվածության վերաբերյալ վիճակագրական տվյալներ, որի միջոցով հնարավոր է դարձել ապացուցելու հետազոտության մեջ ընդգրկված հայ էթնիկ մեդիայի ընտրության որոշ գործոնների՝ հատկապես, քաղաքական գործոնի դերը: էթնիկ մեդիայի տարածման ուղիները նույնպես քննարկվել են, որը նույնպես օժանդակել է գտնելու այդ միջոցներից յուրաքանչյուրի տեղեկատվական հնարավորությունները, էթնիկ արժեքների տարածման գործընթացում:

Երկրորդ գլխում քննարկվել են հայկական սփյուռքում էթնիկ մամուլի առանձնահատկությունների հիմնախնդիրները: Սույն գլխի առաջին հատվածում անդրադարձ է կատարվել էթնիկ մեդիայի համեմատական ուսումնասիրություններին, որի շնորհիվ հեղինակը եկել է այն եզրակացությանը, որ էթնիկ մեդիան ընդհանրություններով հանդերձ ունի նաև ստեղծելու, զարգացնելու, բովանդակության և սպառման առանձնահատկություններ: Այս եզրակացությանը նա հանգել է հետազոտության մեջ ընդգրկված երկրներում իրականացված կոնկրետ էթնոսոցիոլոգիական հետազոտությունների վերլուծության հիման վրա: ՌԴ-ում իրականացված հետազոտությունների միջոցով հեղինակը նշել է, այն յուրահատկությունը, որ այստեղ հայկական մամուլն իրականացնում է կազմակերպական և համախմբող դեր՝ համակարգելով նրանց համազգային խնդիրների լուծման ջանքերը: Այս գլխում կարևորվել է նաև էթնիկ խմբի ձևը և մեդիա ստեղծելու նրանց ավանդույթը: Աշխատության մեջ օգտագործվել են հայ մամուլի պատմագիտական ուսումնասիրությունները, որը հնարավորություն է տվել էթնոսոցիոլոգիական հետազոտության ընթացքում ստացված նյութերը դիտարկել ժամանակագրական տեսանկյունով: Դա կարևոր է հատկապես այն առումով, որ հետագա ավելի մանրամասն ուսումնասիրությունների միջոցով հնարավոր կլինի կանխատեսել

սփյուռքի հայ մամամուլի զարգացման հեռանկարները և դրանց գործունեության բարելավման ուղիները: Հարկ եմ համարում նշել նաև այն հանգամանքը, որ հեղինակն օբյեկտիվորեն նշել է մեթոդաբանական այն բարդությունները որոնք վերաբերվում են սփյուռքում էթնիկության ձևավորման գործում էթնիկ մեդիայի դերին, որոնք նա փորձել է հաղթահարել: Աղբյուրագիտական ուսումնասիրությունների միջոցով պարզվել է հայկական երեք համայնքներում պարբերականների հրատարակման բազմազանությունը, քանակը և հրատարակիչների ցանկը, որի միջոցով հեղինակը մատնանշել է դրանց տեղեկատվական բովանդակության յուրահատկությունները:

Երկրորդ գլխի երկրորդ հատվածում ներկայացվել է թերթերի բովանդակության ընդհանուր և համեմատական վերլուծությունը: Ուսումնասիրվել են «Ասպարեզ», «Ալիք» և «Ноев Ковчег» թերթերի նյութերը: Այս թերթերի ընտրությունը պայմանավորված է նրանով որ դրանք հրատարակվում են տարբեր քաղաքական, սոցիալ-մշակութային պայմաններ ունեցող երկրներում և սփյուռքի էական առանձնահատկություններ ունեցող հատվածներում՝ Լոս Անջելեսում, Թեհրանում և Մոսկվայում: Մամուլի բովանդակության ցուցանիշներ են համարվել «հայկական» և «հիմնական» թեմաները որի միջոցով իրականացվել է տեղեկատվության հարաբերակցության վերլուծությունը: Համեմատելով ուսումնասիրության տվյալները, հեղինակը բացահայտել է, որ նշված թերթերի նյութերը բովանդակային առումով ունեն որոշակի առանձնահատկություններ: «Ասպարեզ» և «Ալիք» թերթերում հայկական թեմաները գերակշռում են, իսկ «Ноев Ковчег»-ում դրանք կազմում են 48,1%: Այս ընդհանուր նկարագրությունից հետո հեղինակը մանրամասնել է թեմաների ուղղվածությունը՝ դրանք դասակարգելով Հայաստանի, սփյուռքի և հայրենիք-սփյուռք կապի վերաբերյալ տեղեկատվության: Թեմաների մատուցման քանակական վերլուծության հետ մեկտեղ իրականացվել է նյութերի գնահատումների ուսումնասիրությունը, որն ունի կարևոր կիրառական նշանա-կություն: Աշխատանքի գիտական բարձր մակարդակի մասին է վկայում այն փաստը, որ ուսումնասիրվել են նաև թերթերի ազդեցիկության կոնկրետ ցուցանիշները, տպագրման էջը, ուղեկցող ցուցադրման միջոցները (լուսանկար, նկար, գծապատկեր, ծաղրանկար), վերնագիրը և այլն: Աշխատանքում նյութերը լուսաբանվել են նաև

ժամանակային կտրվածքով, որը լրացուցիչ տեղեկատվություն է պարունակում բովանդակության առումով: Նյութերը ցույց են տվել, որ տեղեկատվության հիմնական հատվածը նվիրված է արդի պայմաններում տեղի ունեցող իրադարձություններին: Հեղինակն ավելի խորը վերլուծություններ է իրականացրել ըստ հասարակական կյանքի ոլորտների նյութերի բովանդակության դասակարգման հիման վրա, առանձնացնելով՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային, բարեգործական, ազգային և իրավական ոլորտները, որոնք դիտարկվել են նաև ըստ ենթաոլորտների: Սա բազմագործոնային համադրություն է, որն էթնոսոցիոլոգիայի ոլորտում դասվում է ամենաբարդ մեթոդների շարքում, ուստի հարկ է հատուկ նշել հեղինակի գիտական մեծ կարողությունը, որ նա նպատակային է իրականացրել դասակարգումը և նյութերի վերլուծությունը:

Երրորդ գլուխը նվիրված է սփյուռքյան ինքնության ձևավորման գործում հայկական մամուլի դերին: Այս հիմնախնդրի վերլուծությունը կապված է բավականին բարդ տեսական և մեթոդաբանական խնդիրների հետ, քանի որ էթնիկ ինքնության ձևավորման վրա ազդող գործոնների ուսումնասիրություններն իրականացվում են մի շարք գիտական բանագավառների կողմից, որոնց մոտեցումները հաճախ համադրելի չեն: Այստեղ հեղինակը քննարկել է հարցերի նեղ շրջանակ, որը հնարավորություն է ընձեռել բացահայտել էթնիկ ինքնության վրա ազդող գործոնների շարքում էթնիկ մամուլի դերը: Մամուլի նյութերն իրականացնում են նաև խորհրդանշական գործառույթ, որի միջոցով տարածվում են ազգային արժեքները և գաղափարները: Աշխատանքում հիմնավորվել է, որ «Մշակութային միջսահմանային իրավիճակում և այլազգի միջավայրում ապրող հայերի համար սեփական մշակութային արժեքների վերաբերյալ մամուլի տեղեկատվությունը կարող է մշտարթուն պահել ձուլման վտանգը և, ինչպես նաև վերակազմավորել հատվածական մշակութային ինքնությունը»: Արժեքավոր է այն բացահայտումը, որ չնայած սփյուռքի տարբեր հատվածների տարբերություններին, առաջանում է որոշակի էթնոմշակութային ընդհանրական արժեքների ձևավորում:

Երրորդ գլխի երկրորդ ենթաբաժնում վերլուծվել են հայրենիք-սփյուռք հարաբերություններին առնչվող նյութերը: Բազմաբնույթ խնդիրները ֆոկուսացված դիտարկելու նպատակով ուսումնասիրվել է ընդունող երկրի և պատմական

հայրենիքի նկատմամբ դիրքորոշումների սոցիալ-հոգեբանական կողմերը: Այստեղ նշվում է, որ սփյուռքի կենսագործունեության և հայրենիք-սփյուռք հարաբերությունների վրա էական դերակատարություն ունի ընդունող երկրում տիրող իրավիճակը, այդ թվում նաև միջպետական հարաբերություններն ու տեղի բնակչության հետ միջանձնային հաղորդակցությունը: Առանձնացնելով փոխհարաբերությունների երեք հիմնական տեսակներ՝ սփյուռքի և հայրենիքի, սփյուռքի և ընդունող երկրի, սփյուռքի տարբեր հատվածների միջև կապերը, հեղինակը բացահայտել է, որ էթնիկ ինքնության ձևավորման գործընթացում առանձնահատուկ նշանակություն ունի հայրենիք-սփյուռք կապը: Այդ կապի ազդեցությունների մեխանիզմները նույնպես դիտարկվել են, որը տեղեկատվության փոխանցման առանցքային և բարդ խնդիրներից է: Վերլուծելով տվյալները, հեղինակը եկել է գիտական կարևոր նշանակություն ունեցող այն եզրահանգմանը, որ հայ էթնիկ մամուլը ձևավորում է հայրենիքի նկատմամբ որոշակի դիրքորոշումներ, կարծրատիպեր, իսկ դրանց տարբեր բաղադրամասերի ամբողջությունը ստեղծում է հայրենիքի ընդհանուր կերպարի ամբողջությունը:

Երրորդ գլխի երրորդ հատվածը նվիրված է մամուլի այն նյութերի վերլուծությանը, որոնք տարածում են հայկական մշակութային արժեքները՝ հիմնականում պատմական հիշողության տեսանկյունով: Այստեղ կատարված լուսաբանումների թվում կարևոր գործնական նշանակություն ունի հեղինակի այն եզրահանգումը, որ սեփական մշակութային արժեքների վերաբերյալ մամուլի տեղեկատվությունը կարող է վերակազմավորել սփյուռքի հատվածական մշակութային ինքնությունը՝ այլազգի միջավայրում ապրող և մշակութային միջսահմանային իրավիճակում գտնվող հայերի համար:

Ամփոփիչ հատվածում հեղինակը եկել է բազմաթիվ կարևոր եզրահանգումների, որոնք կյանքի կոչվելու դեպքում կարող են էապես նպաստել սփյուռքի մամուլի դերի բարձրացմանը:

Ուսումնասիրությունների ընթացքում հեղինակն օգտագործել է հիմնահարցի վերաբերյալ գիտական հետազոտությունների բազմաբովանդակ նյութեր, տեղեկատվության միջոցների ուսումնասիրման անհրաժեշտ մեթոդները և մեթոդիկան:

Աշխատանքում նկատելի են որոշակի բացթողումներ:

1. Ներածական մասի 6-րդ էջում հեղինակը նշում է «էթնիկ մեդիայի ուսումնասիրություններն իրականացվում են երկու միջոցով՝ մեդիա բովանդակության կամ լսարանի ուսումնասիրում» այս նկատառումը ճշգրտման կարիք ունի, քանի որ դրանք կարող են համատեղվել:
2. Ներածականում ներկայացված տեսական մոտեցումների մի մասը նպատակահարմար կլիներ ընդգրկել առաջին գլխում, որը նվիրված է ուսումնասիրման ենթակա խնդիրներին առնչվող տեսություններին:
3. Նախաբանում նշվում է, որ «Ալիք» օրաթերթը Հայ հեղափոխական դաշնակցության պաշտոնաթերթ է (էջ 15): Սակայն Իրանում կուսակցություններն արգելված են, ուստի «Ալիքի» վերաբերյալ ձևակերպումն անհրաժեշտ է համապատասխանեցնել երկրի օրենսդրական դաշտին:
4. Առաջին գլխում կարելի էր նաև անդրադառնալ մեդիայի ընկալման հոգեբանական տեսություններին, որը կնպաստեր պարզելու էթնիկ ինքնության ձևավորման նախադրյալները:
5. Աղյուսակ 1-ում ներկայացվել է, որ հայերն ու լատինամերիկացիները համայնքի մասին համացանցից տեղեկատվություն չեն ստանում: Այս տվյալը բացատրման կարիք է զգում:
6. Երկրորդ գլխի գծապատկեր 1-ը տեխնիկան որոշ թերություն ունի: Հարկ չկար առանձնացնել «Հայկական թեմաներ 63%» նկարը որը փոքր տեսք ունի: Կարելի էր նյութը ներկայացնել միայն առաջին նկարով՝ տեղադրելով տոկոսային տվյալը:
7. Գծապատկեր 4-ը նույնպես դժվար է ընկալվում:
8. 2-րդ գլխում մամուլի բովանդակության «հիմնական թեմաներ» (էջ 47) ցուցանիշի ձևակերպումը խնդրահարույց է: Այնուհետև հեղինակն այն ձևակերպել է «ոչ հայկական» (էջ 48), որն ավելի ընդունելի տարբերակ է:
9. Երրորդ գլխում, անդրադառնալով Իրանի պայմաններին, նշվում է «առարկայական պատճառներ»-ը (էջ 72), որի կառուցվածքային տարրերի շրջանակները լիովին չի հստակեցվել:
10. Երրորդ գլխի երրորդ ենթաբաժինը, որի վերնագրում և հետագա շարադրանքում առկա «էթնիկ սահման» հասկացությունը որոշ խնդիրներ է հարուցում, քանի որ

այդ սահմանները հայ սփյուռքի տարբեր հատվածների շրջանում կարող են ունենալ առանձնահատկություններ:

11. Այստեղ օգտագործվել է նաև «ինքնության բանակցություններ» արտահայտությունը, որը չի բացատրվել և անհասկանալի է դարձնում տեքստը (էջ 84, 85, 88):

ՀՀ-ում մամուլի էթնոսոցիոլոգիական հետազոտությունները գտնվում են սաղմնային վիճակում և սույն աշխատանքը մեծ ներդրում է այդ բնագավառի զարգացման գործում: Նշված դիտողությունները հայցվորի հետագա գիտական գործունեության ընթացքում կարող են լրամշակվել, ուստի համարում ենք, որ թեկնածուական ատենախոսությունը բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» պահանջները և միջնորդում մասնագիտական խորհրդին՝ Սյուզաննա Սոսի Բարսեղյանին շնորհել Է.00.04 «Ազգագրություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Պաշտոնական ընդդիմախոս՝ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու Ռուբեն Օհանջանյան

Պատմ. գիտ. թեկնածու Ռուբեն Օհանջանյանի ստորագրությունը հաստատում եմ.
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի փոխտնօրեն,
Պատմ. գիտ. թեկնածու Արսեն Բորոխյան
27.02.2020թ.